

կան ողջունել եւ զնացին խաղաղութեամբ եւ մեծաւ ցնծութեամբ յիւրաքանչիւր բնակութիւն:

Այս սքանչելիք եղեն յաւուրս բարեպաշտ թագաւորին Կոստանդիանոսի¹⁷ կացելոյ Հռովմայեցոց աշխարհին, եւ ի հայրապետութեան Ներսիսի¹⁸ Հայոց աշխարհին, եւ ի կողմնակալութեան Վարդայ Վասպուրականի Ռըշտունոյ, որդւոյ քաջի եւ առաքինոյ աստուածասիրին Թէոփոբեայ Ռշտունաց տեառն, եւ զաւարտարի Հայոց Մեծաց աշխարհին, որ արիարար քաջութեամբ վասն սրբոյ եկեղեցեաց շինութեանց՝ զամենայն աւուրս կենաց իւրոց ի մարտ պատերազմաց անցուցեալ եւ վանեալ սրով սուսերի իւրոյ զաղղն իսմայէլեան, յաղթող լինէր հանապաղ վերին աւգնականութեամբն: Այս Վարդ եղեալ քրիստոսասէր ի տղայական տիւր մինչեւ ցկատարեալ ժամանակս վարէր երկիւղիւն Աստուծոյ. այր խորհրդական եւ հանձարեղ, ի մաստութեամբն եւ շնորհաւոր Աստուծոյ, (16ա) կեցեալ սրբութեամբ, պարկեշտութեամբ, խոնարհութեամբ, եկեղեցասիրութեամբ, պատուիրանասիրութեամբ, պաշտաւնասիրութեամբ, զտիւ եւ զվիշեր ոչ պակասեցուցանէր ի տան իւրում զերգս աստուածային սաղմոսաց, կատարելով անխափան զեւթն անգամ սաղմոսն աւրհնութեանցն Դաւթի՝ քահանայիւք եւ դաս դաս պաշտաւնէիւք զեղեղելով առաքէր զհրեշտակական երգս ի բարձունս: Առ սա առաքեալ լինէր ի մեծ եւ ի հռչակաւոր առնէն Թողկայ վասն զալստեան սրբոյ խաչին, եւ որպէս էր պատմեալ զամենայն դործսն ճշմարտութեամբ սքանչելեացն Աստուծոյ՝ զհրեշտակացն եւ զգալուստ սրբոյ խաչին: Եւ մեծաւ խնդութեամբ յոտն կացեալ բազմութեամբ աղատովքն առ նա ժողովելոց, փութանակի հասանէր ի դուրս երանելոյն Թողկայ. եւ եղեալ արժանի սրբոյ խաչին ողջունել՝ առնայր հրաման զի տաւնախմբեսցէ զաւրս դայն զենամար. եւ հրաման տուեալ յիւր վաստակոց արդարութեան ամէլ հաւտս ոչխարաց եւ ջուկս զուարակաց բազումս եւ բազմեցուցեալ զասս դասս զբազմութիւն մարդկանն՝ լցուցանէր զամենեւեան: Որով ընկալեալ զհաճոյութեան աւրհնութիւնսն ի բարերարէն Աստուծոյ բնակէր ի խաղաղութեան եւ տայր փառս ի բարձունս ամենասուրբ Երրորդութեան Հաւր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս:

17. Կոստանդ Բ. 641-668:

18. Ներսէս Գ. Ծինող 641-661: Այս տրւեալներէն կը հետեւի թէ Վարդի Ս. խաչին երեսուժ տեղի ունեցած է ընդ մէջ 641-ի եւ 661-ի: Իսկ Վարդ իշխանի կուսակալութեան յիշատակումով զեռաւելի կրնանք սեղմել ժամանակը. վասնորի Թէոփոբ Ռշտունին 655ին մեռած ըլլալով, անոր որդին Վարդ, այդ թրւականէն ետք ստացած է կուսակալութիւնը: Ծանոթութիւն մը համաձայն ալ ձեռնարկէ Հայոց թուականին տեղի պէտք է ունեցած ըլլայ խաչին յայտնութիւնը,

այսինքն 653ին: Սակայն վերի ըսածնու հետ ան չի համաձայնիր: Ուստի կ'ընդունինք Օրմանեանի թելադրած սրբազրութիւնը այդ թուականը կարգաւ ձեռն. որ է ըսել 660 տարին: Մասնաւոր որ Օրմանեան (Աղգապատում, Ա. էջ 737) ուրիշ անտեղութիւն մըն ալ կը նշէ 653ին համար, այսինքն Ներսէս կաթ.ի փախուստը Հայաստանէն՝ այդ տարին. մինչդեռ 660ին համար լաւ կը յարմարին վերեւ յիշուած բոլոր պարագաները:

ՔՆՆԱԿԱՆ ՓՈՐՁ ՄԸ

ՆԵՐԿԱՅ ԳՈՅՈՒԹԵՆԱՊԱՇՏ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ՇԱՐԺՈՒՄԻՆ ՇՈՒՐՁ

ՔԻՐՔԵԿԱՐՏ - ՆԻՑՇԵ - ՍԱՐԹՐԸ - ՄԱՐՍԵԼ

(Շար. տե'ս «Բազմալեզու» 1965, ք. 8-10, էջ 233)

Ն Ի Ց Շ Ե

(Friedrich Nietzsche, 1844-1900)

Խորտակուած, ստորնացած զգաց ինքզինքը Նիցշէ Քիրքեկարտի յայտարարութեան զիմաց ու իր ստեղծած աստուծոյ¹¹ զիսկին առջեւ ըսաւ. «Իմ կամքս ըլլայ»:

Նիցշէ ալ մեղի կը ներկայանայ իր փոթորկոտ ինքնակենսադրութեան էջերով: 1862-1872ի տեւեմբերը տեղի ունեցաւ կարեւոր եւ նշանակալից հանդիպում մը Նիցշէի եւ Վալկների: Վալկների երաժշտութիւնը, կը դրէ Պրիմի, Նիցշէի երեցաւ իրրեւ վերադարձ մը զէպի Հոլը, զէպի ապրելու տենչացող անսպառելի կամքի մը անդունդները¹²: Հինէն խտացած ոյժի մը պոռթկալը կ'աւետէ մեղի Նիցշէ, վերադարձ մը կը քարոզէ, կը պահանջէ հաւատարմութիւն նիւթին եւ հողին... բնութեան: Նիցշէ կը պատմէ մեղի Աստուծոյ մը մահուան մասին: Գիտակից է Նիցշէ իր քարոզածին կարեւորութեանը մասին: Նիցշէ, կ'ըսէ չեքմանացի ուսումնասէր մը, զիտէ թէ եւրոպական մշակոյթին ամբողջ հիմք՝ հաւատքն է Աստուծոյ հանդէպ. եթէ խորտակուի այդ հաւատքը, ամբողջ աշխարհ մը կը կործանի իրեն հետ: Եւ այն ատեն ինքը Նիցշէ, պիտի դառնայ մարդարէն արեւու մթաղնութիւն ու խաւարումին, որուն հաւասարը եղած չէր երբեք երկրի վրայ¹³:

Այս Աստուծոյ զէմ եղած ըմբոստ շար-

ժումը, (ճանչնալով հանդերձ անոր եղանականութիւնն ու ինքնատուութեան նորութիւնը) իր ընդհանուր արտայայտութեան մէջ կը մնայ սակայն միշտ կրկնութիւնը անցեալին:

Քիչ տարիներ առաջ, այսինքն 1840ին, Ֆոյերպախ (Feuerbach) հռչակած էր «փոփոխութեան մը անհրաժեշտութիւնը», եւ առաջին անգամ ըլլալով պահանջած էր «որոշապէս ոչ-քրիստոնեայ իմաստասիրութիւն մը»¹⁴: Վճռականորէն ըսած էր թէ Աստուծոյ դոյութեան հարցը կը պատկանի ԺԸ-ԺԷ դարերուն, եւ ոչ մէկ կերպով ԺԹ. դարուն: Մարքս կրօնքը անուանած էր ժողովուրդի ափիոն: Քրիստոսէ մէկ դար առաջ Լուկրետիոս գոված էր Եպիկուրը, որ յանդգնած էր ընդվզիլ հեթանոս աստուածներուն դէմ, ուղելով ազատել մարդկութիւնը անոնց աղգեցութենէն եւ անոնց ծնունդ նախապաշարումներէն:

11. Այո', ի'ր ստեղծած զիսկին առջեւ, որովհետեւ այն Աստուծոյ՝ որուն մահը հռչակեց Նիցշէ, չէ ճշմարիտ, քրիստոնեայ Աստուծոյ, այլ Վալկներեան երաժշտութենէն ու Վալկների սխալ թելադրանքներէն ծնունդ առած Աստուծոյ մըն էր:

12. P. Prini, անդ էջ 54: Հմտ. Նիցշէ «Crepuscolo degli idoli»:

13. Georg Siegmund, **Der Kampf um Gott**, Berlin 1960. իտլ. թարգմ. Storia e diagnosi dell'ateismo, ed. Paoline 1961, էջ 388:

14. Իմաստասիրութիւն մը, այսինքն, ուր բացակայ ըլլայ Աստուծոյ:

Նպրկուր պախարակեց հեթանոս գե-
ցարանութիւնը. Գոյերպախ, Մարքս,
Նիցշէ ուղեցին կարգալ Աստուծոյ դամ-
բանականը: «Հին Աստուծոյ մեռած է»,
կ'աղաղակէ Նիցշէ: Բայց հոս չի վեր-
ջանար իր պատգամը. «Թող ապրի գեր-
մարդը» կ'աւելցնէ Նիցշէ: Վախճանած
վերացական Աստուծոյ տեղ՝ ստեղծուե-
ցաւ «Գերմարդը», երկրաւոր նոր աս-
տուծոյ: Վերջին պատճառ-արմատը այս
խորխոր եւ ըմբոստ դիրքին՝ Հայարտու-
թիւնն է: Նիցշէ ասոր ալ գիտակից է եւ
աներկիւղ կը յայտնէ մեղի ինչ որ իր
«Ես»ը սորվեցուցած էր իրեն. «Իմ եսս
ինծի նոր հպարտութիւն մը սորվեցուց,
հպարտութիւն մը՝ որ ես մարդոց կ'ու-
ղեմ սորվեցնել. այսինքն՝ չծածկել մեր
գլուխը երկնային աւազներուն մէջ, այլ
պահել զայն բարձր, ձեւով մը՝ որ պատ-
շաճ է հողին. գլուխ մը՝ հողէ, գլուխ մը՝
որ հողին իմաստը կ'որոնէ»¹⁵: Հետեւա-
բար, հարկ է մոռնալ երկինքը. միակ
անհրաժեշտը այս երկիրն է. եւ հոս տի-
րապետողը «Գերմարդն է»: «Բոլոր աս-
տուածները մեռած են, եւ հիմա կ'ուղենք
որ ապրի Գերմարդը» (Այսպէս խօսեցաւ
Զրադաշտը): Նիցշէի ամենամեծ սպա-
սումը եղաւ գերմարդուն հանդէպ ցոյց
տրուելիք հաւատքն ու յոյսը: «Եթէ մար-
դը չհրթայ այլեւս սուղուելու Աստուծոյ
մէջ», կ'ըսէ Նիցշէ, եթէ բարձրանայ
միշտ՝ նման ալպեան լիճին, այն ատեն...
գուցէ, այդ մերժողականը՝ չունենալու
այլեւս յարաբերութիւններ Աստուծոյ
հետ՝ պիտի տայ մարդուս այն ոյժը՝
հասնելու գերմարդուն բարձրութեան¹⁶:

Նիցշէ վճռական կերպով եւ արմատա-
պէս իրադործեց իր առաջին փափաքը.
«Իմ կամքս ըլլայ»: Աստուծոյ ներկա-
յութիւնը արգելք մը համարեցաւ՝ ա-
զատօրէն կարենալու համար իրադործել
իր սեփական կամքը: Անվախ խոստովա-
նեցաւ իր ուժիւրը. «Ես սպաննեցի Աս-
տուծոյ», եւ այլեւս, ըսաւ, ազատ էք.
կարծեց ստացած ըլլալ իր ազատութիւնը.
«Հիմա այլեւս թող իմ կամքս ըլլայ»:

Քիրքեկարտ աղօթած էր յանձնելով

ինքզինքը «Բացարձակին»։ «Աստուած իմ
քու կամքդ ըլլայ»։ Ծիշտ հոս այս ըն-
տրանքին պահուն է որ «Ըլլալու հարցը»
իր ամէնէն աւելի տաք եւ առեղծուածա-
յին արտայայտութեան մէջ կը գտնու-
ւի...։ Քիրքեկարտ իր գոյութիւնը Աս-
տուծոյ ծառայութեան կը նուիրէ. Նիցշէ
կը հրաժարի Աստուծոյ գոյութենէն (ար-
գելնք՝ Աստուծոյ մասին ունեցած սխալ
ծանօթութիւններուն)։ Հետեւաբար եր-
կու գոյութիւններու հանդիպումի մասին
է հարցը։

Մէկ կողմէն Ըլլալ մը՝ վերացական,
անհուն եւ բացարձակ. Աստուած։

Միւս կողմէն Ըլլալ մը՝ ներաշխարհ,
սահմանափակ եւ պատահական. Մարդ։

Քիրքեկարտ շեշտելով հանդերձ այդ
մեծ վիճը՝ որով այդ երկու գոյութիւն-
ները կը բաժնուին իրարմէ, ցոյց տուաւ
թէ ինչպէս մարդուն գոյութիւնը առանց
Աստուծոյ գոյութեան՝ կը մնար անի-
մաստ. եւ թէ ինչպէս մարդուն կատարե-
լութիւնն ու ամբողջացումը պիտի իրա-
դործուի ա՛յն ատեն միայն՝ երբ վերջ-
նականապէս միանայ «Բացարձակին»...
Աստուծոյ հետ։

Նիցշէ, գրեթէ հակապատկերը Քիրքե-
կարտի, ուղեց որ Աստուած մեռնի, որ-
պէսզի մարդը ապրի, որպէսզի ի՛ր կամքը
ըլլայ։ Նիցշէի համաձայն, մարդը՝ ա-
ռանց Աստուծոյ միայն կրնայ կատարեալ
ըլլալ։

Հետեւաբար Քիրքեկարտ եւ Նիցշէ կը
ներկայացնեն երկու հակոտնեայ հոսանք-
ներ, պատկանելով հանդերձ նոյն աղբիւ-
րին։ Քիրքեկարտի գոյութենապաշտու-
թիւնը կը յայտնուի գրական՝ Աստուծոյ

15. Հմմտ. Georg Siegmund, անդ էջ 414։

16. Երկայն պիտի ըլլար՝ եթէ ուղեցնէք աւելի բա-
ցատրել Նիցշէն։ Այսօր շատեր կ'ուսումնա-
սիրեն զինքը։ Ներկայ դարուն իմաստասէրը
Մարթին Հայտեկեյեր, Nietzsche վերնագիրով
(վերջերս հրատարակուած) ընդարձակ հատո-
րով տուած է մեղի հետաքրքրական մեկնու-
թիւն մը։ Մեր ներկայ յոգուածին մէջ, սա-
կայն, այսչափով կը գոհանանք, չհեղելու հա-
մար մեր ընդհանուր ծրագրէն։

Ս Ա Ր Թ Ր

(Jean Paul Sartre, ծն. 1905)

նկատմամբ։ Նիցշէի գոյութենապաշտու-
թիւնը կը յայտնուի ժխտական՝ մերժե-
լով Աստուծոյ գոյութիւնը։

Ներկայ գոյութենապաշտ շարժումը իր
մէջ կը պարունակէ այս երկու հոսանքնե-
րը։ Կան հեղինակներ, որոնք կը յանդի-
ն Քիրքեկարտեան լուծումին (ինչպէս օր.
Գ. ՄԱՐՍԵԼ)։ Ուրիշներ կը սկսին իմաս-
տասիրել Նիցշէի հետքերուն վրայէն (գի-
տակից կամ անգիտակից) առանց նոյն-
իսկ մտածելու Աստուծոյ վրայ կամ աս-
տուածային գոյութեան մը մասին (օր.
ՍԱՐԹՐ)։ Կան նաեւ հեղինակներ, ո-
րոնց իմաստասիրութիւնը ո՛չ կը հաստա-
տէ եւ ոչ կը ժխտէ Աստուծոյ գոյութիւ-
նը (օր. ՀԱՅՏԵԿԿԵՐ)։¹⁷

* * *

Կեդրոնական հարցը, որ նոյն է Մարք-
սի շրջանէն սկսեալ մինչեւ մեր այսօր-
ուան գոյութենապաշտ շարժումը, մար-
դուն ազատութեան եւ Աստուծոյ գոյու-
թեան միջեւ եղած ընտրանքի մը մէջ կը
կայանայ։ Մարքսի համար՝ մարդը մարդ
կ'ըլլայ կռուելով ու պայքարելով բնու-
թեան հետ։ Հետեւաբար, Մարքս կ'եզրա-
կացնէ՝ թէ անիկա (մարդը) չի կրնար
ուրիշէ մը եղած ըլլալ, չի կրնար Աս-
տուծմէ մը շինուած ըլլալ։ Ծիշտ այս կէ-
տին մէջ Մարթի վարդապետութիւնը,
եթէ հետեւողական չէ Մարքսի, սակայն
անտարակոյս շատ կը նմանի անոր¹⁸։

17. Թէեւ այս բաժանումը՝ այս յստակութեամբ
չի ներկայանար ամէն հեղինակի մօտ։

18. Այսպէս կը հաստատէ Հայտեկեյերի մասնագէտ
գերմանացի իմաստասէրը J. B. Lotz։ Lotz
ցոյց տալէ ետք թէ Հայտեկեյերի ուսումնա-
սիրած էակը՝ սահմանաւոր է էական եւ պատ-
մական (essentialiter finitum et histori-
cum), կ'աւելցնէ. «Num Heidegger adhuc
ultra hos limites philosophice progredie-
tur, nondum sive negative sive affirma-
tive decidi potest; tamen constat, ipsum
omnino atheismum reicere, sed nec the-
ismum positive affirmare. Հմմտ. Meta-
physica operationis humanae, methodo

Մարթին համար ալ մարդը իր իւրա-
յատուկ գոյութեան արարիչն է։ «Պարզ
հետոքութիւն մը չէ, կ'ըսէ Իկոր Գա-
րուզոյ, երբ Մարթը կը հռչակէ. «Թէ
մարդը մարդուն ստեղծագործութիւնն
է»²⁰։ Մարթի համար գոյութիւն չունի
մարդկային բնութիւն մը. «l'homme est
tel qu'il se crée»։ Այս վարդապետու-
թեան հետեւանքը ուրիշ բան չէր կրնար
ըլլալ՝ եթէ ոչ «Թէ մարդը լիովին պա-
տասխանատու էակ մըն է»։ Լքուած,
կղզիացած գոյութիւն մը։ Բայց ազատ է
այդ գոյութիւնը. եւ Մարթը ճիշտ այդ
ազատութեան մէջ կը տեսնէ մարդուն
դատապարտութիւնը։ «Մարդը դատա-
պարտուած է ըլլալու ազատ», կ'ըսէ ան,
իր ընդարձակ եւ նշանակալից հատորին
մէջ²¹։ Իր դրած սկզբունքին տխուր հե-
տեւանքները, Մարթը ինքը եզրակացուց։
Մարդկային գոյութիւնը տկար է, առանց
ոչ մէկ օգնութեան։ Մարդը նետուած մըն
է կեանքին մէջ։ Ի՞նչպէս եւ որմէ...։
Այս է հարցումը, որուն Մարթը չի կըր-
նար, կամ լաւ եւս՝ կը մերժէ պատաս-
խանել։ Սակայն հարցը կը մնայ, եւ ա-
նոր անհրաժեշտութիւնը՝ անժխտելի. ո-
րովհետեւ այդ հարցումը բնազանցական
անհրաժեշտութեամբ մը կը ծագի, երբ
սահմանաւոր էակին առջեւ կը գտնուինք։
Աստուած անհրաժեշտ պահանջ մըն է։

transcendentali explicata; Roma P. U. G.
1958, էջ 95։

19. Այս նմանութիւնը պէտք չէ սակայն ընդհան-
րացնել։ Այսօր հեղինակներ կը վիճին Մարթի
մարքսեան ըլլալուն կամ չըլլալուն մասին։
Մենք այս մասնական կէտին մէջ միայն նմա-
նութիւն մը կը տեսնենք. նմանութիւն մը՝ որ
կրնայ զուտ պատահական ըլլալ. հետեւաբար,
հարց մըն է՝ որ դեռ լուսարանութեան կա-
րօտ է։

20. Igor Caruso, *Psychanalyse Und Synthese
der Existenz* ed. Herder Freiburg 1952.
Խալ. Թարգմ. Psicanalisi et sintesi dell'e-
sistenza, Marietti 1953, էջ 515։

21. J. P. Sartre, *l'Etre et le Néant*.

Սարթր իր մէջ կ'ամփոփէ զինքը կանխորոշումների հոսանքը, եւ առաջին համաշխարհային պատերազմին խնդիրը «ընդհանրական գոյութեան պաշտպանում» (Heidegger, Jaspers, Berdiaeff, են.): Սարթր, միաժամանակ, ֆրանսական ժխտական հոգեբանության (Ա. Ժիտլերի խնդիրը) մարմնացումն է: Սարթր չոր իմաստասիրութիւն մը չի ներկայացնում մեզի, այլ դրական գեղեցիկով կ'ուզէ համոզել մարդկութիւնը:

Սարթր յոյսն եղաւ վերջին պատերազմը տեսնող երիտասարդներուն: Պատերազմէն անմիջապէս ետք, Սարթր ընծայեց հասարակութեան «Ազատութեան ճանապարհը» վերնագիրով երկու հատորները, թատրոն մը «Huis-clos» (Փակ-դուռ կամ Փակ դռներով), եւ հուսկ աւելի անմիջական կերպով մօտեցաւ երիտասարդութեան իր թերթով, որուն վերնագիրն էր «Les temps modernes» (Նոր ժամանակները): Սարթր խօսեցաւ անոնց ձգիչ տողերով, խօսեցաւ անոնց՝ իրենց սիրած «մոթիֆներով»: Յոյս տուաւ անոնց իրենց առանձնութիւնը եւ իրենց գոյութեան անորոշութիւնը (հոս ալ հարկ է յիշել Ֆրանց Գաֆֆայի արտադրութիւնները): Եւ հուսկ, Սարթր յայտարարեց իրենց անկախ ու կապանքներէ զերծ ըլլալը. Ազատութիւն...:

Տոսթոյեւսկի դրած էր. «Եթէ Աստուած գոյութիւն չունենար՝ ամէն ինչ ներքին պիտի ըլլար»: Սարթր կը յայտարարէ թէ իր գոյութեան պաշտպանութիւնը այս տողերէն ծայր կ'առնէ: Սարթրի գոյութեան պաշտպանութիւնը համոզուած է թէ, եթէ Աստուած գոյութիւն չունենայ՝ ոչ մէկ արժէք, ոչ մէկ կանոն կրնայ կանգնել մարդուն առջեւ, օրինաւորելու համար անոր գործունէութիւնը: «Մենք, կ'ըսէ Սարթր, արժէքներու տիրապետութեան տակ, չունինք, ո՛չ մեր ետեւ, ո՛չ մեր առջեւ, արդարացում կամ չքմեղանք, առանձին ենք, առանց չքմեղանքի»²²:

Սարթր, սակայն, չէ ըսած մեզի իր վերջին խօսքը այս կէտին շուրջ: Ներկայիս կը սպասուի Սարթրէն իր «Բարոյա-

կանի հատորը»: Սարթր չատ խիստ եւ զրեթէ յուսահատ արտայայտուած է առաջին գործերուն մէջ, ուր նոյնիսկ յանդերձնած է ըսել տալ huis-clos-ի խելագար անձնաւորութիւններէն մէկուն «Դժոխքը, միւսներն են»:

Սակայն, 1946էն ետք, Սարթր սկսած է մեղմանալ: Սարթր կը ջանայ իմաստ մը տալ «Համակեցութեան» (Coexistence), հակառակ Մարքսի հետեւորդներուն, ջանալով հաշտեցնել մէկուն ազատութիւնը՝ զիմացիին ազատութեան հետ, բարեկամացնելով «ես»ը «գու»ին հետ: «Մենք կ'ուզենք ազատութիւնը ազատութեան համար, եւ ամէն մասնական պարագաներուն ընդմէջէն: Եւ ուզելով ազատութիւնը, կը յայտնենք որ անիկա ամբողջապէս կախում ունի ուրիշներու ազատութենէն, եւ թէ ուրիշներու ազատութիւնը՝ կախում ունի մեր ազատութենէն: Արդարեւ ազատութիւնը, նկատուած իրրեւ Սահմանը (définition) մարդուն, կախում չունի ուրիշներէն. սակայն այն վայրկեանէն որ յանձնառութիւն մը կայ, ես պարտական եմ ուզելու միաժամանակ իմ ազատութիւնս եւ ուրիշներուն ազատութիւնը: Չեմ կրնար ընդունիլ ազատութիւնս իրրեւ վախճան, եթէ հաւասարապէս չընդունիմ իրրեւ վախճան ուրիշներու ազատութիւնը»²³:

22. J. P. Sartre, l'Existentialisme est un humanisme, Nagel, Paris, 1946, pg. 55.

23. Անդ էջ 83: Այսօր, ինչպէս ծանօթ է ամէնուն, մարքսիզմի այս «համակեցութեան» տեսակետը կը ճանչնայ երկու մեկնութիւն. Զինատան բացարձակօրէն կը ժխտէ «խաղաղ համակեցութեան» վարդապետութիւնը, յայտարարելով թէ ատիկա հակառակ է ճշմարիտ մարքսիզմի սկզբունքներուն: Ռուսաստան ընդհակառակն կը ջանայ աւելի հաշտ մեկնութիւն մը տալ, ընդունելով եւ պաշտպանելով «խաղաղ համակեցութեան» վարդապետութիւնը՝ չինական քննադատութեան դէմ: Մարքսի վարդապետութիւնը, դասակարգային պայքարի ընթացքին, կ'ուզէ բնաջնջումը դրամատիքական (capitaliste) դասակարգին, եւ այս կարգի «Դու»երը ուրիշ բան չեն՝ եթէ ոչ մէկական թշնամիներ: Սարթրը, առանց

Գ. ՄԱՐՍԵԼ

(Gabriel Marcel, ծն. 1889)

Իսկապէս դժուար է հաշտեցնել այս բոլորը, Սարթրի առաջին գործերուն մէջ յայտնած գաղափարներուն հետ, ուր «միւսը» ներկայացուած է իրրեւ մէկը, որ կ'ուզէ կլանել զիս, կամ կը ձգտի ու չընչացնել իմ ազատութիւնս, որպէսզի իր ազատութիւնը հաստատէ եւ միայն զայն պարտադրէ ուրիշներուն: Սարթր արդեօք փոխուած է հիմա. «Սարթր ուրիշ ոյժը միշտ ծայրէն սկսելու», ըսաւ վերջերս իտալացի գրագէտ Գարլոյ Պոյ: Հետեւաբար, այսօր դժուար է վերջնական դատաստան մը կատարել՝ Սարթրի մասին: Առայժմ, որքան ալ ժխտական ըլլայ Սարթր, մեր դատաստանը իր մասին կը մնայ առկա: Սարթր կ'ապրի, ատակ է դեռ զարգացումի:

Եթէ ուզենք ներկայ Սարթրը դասաւորել, զինք պիտի զետեղենք այն խումբին մէջ՝ որոնք ուզեցին եւ կ'ուզեն «իրենց մէջ» որոնք կատարել միայն: Անոնց մէջ՝ որոնք Բացարձակին գոյութիւնը չուզեցին ընդունիլ՝ ստորնացում համարելով զայն, եւ Անոր կամքը արգելք՝ իրենց ազատութեան: Անաստուածութիւնը մը, սակայն, որ չատ անգամ կը ստանայ տղայական արտայայտութիւն: Շատ անգամ կը ըսալանք որ Աստուած ինքզինքը ջոյց տայ կամ յայտնէ: Սիմոն տը Պոլուար (Սարթրի աշակերտուհին) կը գրէ «Je sommais Dieu de se manifester s'il existait»²⁴: Իրականին մէջ, կ'ըսէ Սարթր, ոչ մէկ բան կայ. մարդուն փնտռութիւնը, անոր հաւատքը անիմաստ է «l'homme se perd en vain; il est une passion inutile»: Սարթր իր «Le Diable et le bon Dieu» գործին մէջ կ'ըսէ Կեօցի բերանով «or Dieu ne m'a ni puni de mon crime, ni soutenu ma tentative de sainteté»²⁵: Հետեւաբար ոչ մէկ դժուարութիւն. Ժխտական եղբայրացութիւն մը:

Այս համառօտ ներկայացումի վերջին մասերուն մէջ, Գ. Մարսելին հետ կ'ուզենք խորհրդածել, ջանալով ամբողջացնել մեր տեսութիւնը՝ այս ընդհանուր եւ միանգամայն իր տեսակին մէջ մասնական հարցին շուրջ:

Ինչպէս վերը անցողակիօրէն ակնարկուեցաւ, բնազանցական գոյութեան պաշտպանութեան ներկայացուցիչներէն է, որոնք կրեցին եւ կը կրեն իրենց մէջ ներկայ դառուն հոգեւոր եւ մտային «crise»ը, եւ կը պեղեն իրենց մտքի սլաքներով գոյութեան հարցին վերջին իմաստը, ուզելով հասնիլ եւ նոյնիսկ չօգտփել հարցին վերջին եւ հիմ կազմող արմատները:

Պերտիաֆ (Berdiaeff), Հայտեկներ, Եասիերս, ասոնք ալ կը զբաղին նոյն հարցով, եւ իւրաքանչիւրը իր տեսակին մէջ ցոյց տուած է արժէքաւոր էջեր եւ կարեւոր անդրադարձութիւններ: Սակայն, դժուար եղաւ այս ընդհանուր ակնարկին մէջ զիրենք ալ զետեղել. գիտնալով հանդերձ որ մեծ լոյս պիտի ափռէին անոնք էական հարցին շուրջ: Մանաւանդ որ Սարթր ինքզինքը Հայտեկերի աշակերտ կը նկատէ (թէեւ Հայտեկեր մերժած է միշտ այս աշակերտութիւնը): Յետոյ Հայտեկեր նորութիւն մըն է իմաստասիրութեան պատմութեան մէջ, և հարուստ՝ իր գաղափարներով, ընդարձակ՝ իր տեսութիւններով, վերլուծական՝ իր մտածութիւններուն մէջ, և այնքան խոր՝ իր անդրադարձութիւններուն մէջ, որ չատ անգամ կը պակսին իրեն արտայայտուելու բառեր: Արդ, եթէ հոս ուզենք Հայտեկերի մասին ալ խօսիլ, գրութեան ոճերնիս պիտի փոխուէր, ինչպէս նաեւ անոր տեսակը. եթէ հիմա աւելի պատմական է, այն ատեն պիտի ըլլար աւելի

դասակարգային այս բացայայտ գանազանութեան, կ'ընդունի ամէն կարգի «Դու»ի մը ազատութիւնը եւ կը յարգէ անոր գոյութիւն ունենալու իրաւունքը:

24. Simone de Beauvoir, Mémoire d'une jeune fille rangée, Paris 1958, p. 270.

25. Որքան նմանութիւն Ահարոնեանի «Անհաւատիկ» մէջ նկարագրուած Աթոյին ու անոր՝ Գասպարի մահուան առջեւ կատարած խորհրդածութիւններուն:

ընդհանրական-պատմական: Հետեւաբար թողնուի այս բոլորը, կ'ամփոփուինք Մարսելի հետ, առանց ուղեւոր մեր այս ընտրանքին մէջ նսեմացնել մեծութիւնը Մարսելի, այլ պարզապէս որովհետեւ աւելի անմիջական կը խօսի իր ընթերցողներուն եւ աւելի սերտօրէն կը շարկապուի մեր ներկայ նիւթին հետ, ջանալով միանգամայն պատասխան մը տալ վերը ներկայացուած բարդ հարցերուն:

Հարցը միշտ նոյնն է — «ԸԼԼԱԼԸ». մէկ կողմէն Աստուծոյ գոյութիւնը, միւս կողմէն մարդուն գոյութիւնը: Մարդը՝ Աստուծոյ հետ, թէ մարդը՝ առանց Աստուծոյ: Ոչ ոք տեսած է այդ Աստուծոյ: Աստուծոյ իմացութիւնը մըն է մեզի համար: Սակայն, արարածները կը մօտեցնեն մեզ այդ խորհուրդին, կ'ապացուցանեն մեզի այդ խորհուրդին գոյութիւնը: Հաւատացեալը կ'ընդունի այդ գոյութիւնը եւ կը դառնայ երկրպագուն այդ խորհուրդին՝ Աստուծոյ:

Սակայն, ամէնուն դիրքը նոյնը չէ խորհուրդին դիմաց: Խորհուրդը ոմանց տանջանարանն է, միւսն է՝ ուրիշներու հանգիստը. ոմանց՝ յուսահատութիւնը, իսկ ուրիշներու՝ յոյսը: Խորհուրդին առջեւ կը պահանջուի անկեղծ գիտակցութիւն մեր գոյութեան հանդէպ: Մեր գոյութիւնը, մեր կեանքը՝ այդ խորհուրդին մէջ է: Ես ու դուն՝ խորհուրդ մըն ենք, մենք մեզի համար եւ միաժամանակ իրարու հանդէպ: Սակայն, կ'ապրինք իրարու հետ եւ իրարու օգնութեամբ: Մեր կեանքին դիմաց՝ մահը կանգնած է. եթէ կը սիրենք զիրար, Աստուծոյ յաւիտենական սիրոյն մէջ կ'անմահանանք նաեւ մենք: Այո՛, մեր իրարու հանդէպ ունեցած սէրը կ'անմահացնէ մեզ: Երբ կ'ըսեմ քեզի՝ թէ կը սիրեմ քեզ, կը նշանակէ թէ «դուն պիտի չմեռնիս»: Իմ սիրած անձիս մահուան առջեւ, իմ միակ եւ ճշմարիտ հոգեկան արտայայտութիւնս է հաւատքը եւ աղօթքը, որով իմ սէրս, իմ քեզի հետ ունեցած հաղորդակցութիւնս կը պահուի, կը տեսէ, եւ կ'ընդարձակուի Աստուծոյ մէջ^{25*}:

Հոս, այս մթնոլորտին մէջ, Մարսել կ'իմաստասիրէ: Որքան որ ողբերգակ վերջաւորութիւններ ունենան իր թատերգութիւնները, սակայն միշտ ներկայ է սիրոյ ջերմութիւնը, առաջնորդելով անձնաւորութիւնները դէպի խորհուրդը...: Կայ ճիշդ մը գերազանցելու առարկայական ապացոյցներն եւ ստուգութիւնները, յանդիման համար խորհուրդին: Խորհուրդը, կ'ըսէ Ապել «L'iconoclaste»-ի անձնաւորութիւններէն մէկը, խորհուրդը միակ բանն է, որ կ'ամփոփէ (հակառակ առարկայական ճանաչողութիւններուն, որոնք անհունօրէն կրնան երթալ). առանց խորհուրդի կեանքը անշնչելի պիտի դառնար: Այսպէսով, Գ. Մարսել, կ'ուզէ խօսիլ, կ'ուզէ մօտենալ մարդկութեան՝ իրեն ներկայ պահանջներով: Արդարեւ, ներկայ հոգեբանութիւնը խորհուրդի մը կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը կը զգացնէ մեզի. Մարսել այդ խորհուրդով կը մօտենայ մարդկութեան: Ըսինք քիչ առաջ. «առանց խորհուրդի՝ կեանքը անշնչելի պիտի դառնար»:

Գ. Մարսել յաճախ կը կեդրոնացնէ իր խորհրդածութիւնները երկու հիմնական եզրներու շուրջ. «Ես կը զգամ», եւ «Ես

25* Նոյնն է նաեւ եզրակացութիւնը՝ որուն կը յանդիման մեր ժամանակներու անուանի բեմագիր Ինկմար Պերկմանը, իր «Իրքիւ հայելիի մը մէջ» ժապաւնի վերջաւորութեան. հոն, մինչ արծաթեայ լոյսի շող մը կը լուսաւորէ մօտակայ պատուհանի ապակին, Գալիլէ, երկար տաղանայներէ ետք, այսպէս կ'ըսէ իր քով գտնուող զաւակին (Մինուս). «Աստուծոյ սէր է... որեւիցէ սէր մը...: Չեմ գիտեր թէ սէրը արդեօք Աստուծոյ գոյութիւնը կ'ապացուցանէ, թէ ինքը արդէն Աստուծոյ է: Սակայն այս մտածութեամբ՝ իմ յուսահատութիւնս անդորր կը գտնէ: Յանկարծակի պարպը կը փոխուի լեցունին, եւ յուսահատութիւնը՝ կեանքի»: Տղան, Մինուս, կը հասկընայ հօրը խօսքերուն իմաստը ու կը հարցնէ սփոփուած չեղով մը. «Ուրեմն մեր քոյրը (Քարին)՝ որ բացակայ է) այնու որ զինքը կը սիրենք, Աստուծոյ՞ շրջապատուած է»: Պատասխանը հաստատական է:

կը հաւատամ»: Երկու բեւեռներ, որ ծընունդ կու տան կարեւոր զանազանութեան մը, ընդմէջ «Հարցին» (problème) եւ «խորհուրդին» (mystère): «Հարցը, կը դրէ Մարսել, բան մըն է՝ որուն մենք կը հանդիպինք, եւ որ կը փակէ մեր ճամբան: Հարցը ամբողջապէս ներկայ է մեր առջեւ: Մինչդեռ, ասոր հակառակ, խորհուրդը բան մըն է՝ որուն մէջ ինքզինքս պարունակուած կը գտնեմ, եւ որուն հոգեթիւնն է չլլալ ամբողջապէս եւ լիովին ներկայ իմ աչքիս առջեւ: Մարսելի համար խորհուրդը հակասական բան մը չէ (ասով Մարսել կը զանազանուի Եսսփերսէն) եւ ոչ այն՝ ինչ որ տարտամ է եւ անորոշ, կամ անճանաչելի եւ անմտածելի. «C'est au contraire une réalité qui a une raison positive de ne pas se dévoiler en une présence «objective»²⁶:

Խորհուրդը կը գերազանցէ մեզ եւ մեր պատճառարանութիւնները. ներկայութիւն մըն է, այո՛ խորհուրդը, սակայն քողարկուած, պէտք ունի մեզի՝ որպէսզի յայտնուի: Հետեւաբար խորհուրդին առջեւ մեր դիրքը կրաւորական չէ երբեք²⁷:

Գ. Մարսելի համաձայն, առարկայական ապացոյցները կամ պարզ վերացական անդրադարձութիւնները՝ խորհուրդին առջեւ կը կորսնցնեն իրենց ոյժը եւ կը մնան ամուլ: Ճիշտ ասոր համար՝ Մարսել կ'ուզէ որ մենք թողունք վերացական տրամաբանութիւնները, «արտաքին առարկայականութիւնը», ամփոփուելու համար մեր ենթակայականութեան մէջ, հանդիպելու համար մեր մէջ անոր՝ զոր կը փնտռենք (ասով՝ Մարսել կը մօտենայ Փաքսալին եւ Ս. Օգոստինոսին):

Ի՞նչպէս, սակայն, տեղի պիտի ունենայ այս հանդիպումը: Մարսել կը խօսի երկրորդ անդրադարձութեան մը մասին «réflexion au second degré», որով մենք կը յաջողինք, տեսակ մը յայտնատեսութեամբ, թափանցել այդ խորհուրդին մէջ: Այս յայտնատեսութիւնը չի ձերբազատեր՝ սակայն՝ խորհուրդը, զինքը քողարկող մշուշներէն, այլ միայն կը մօ-

տեցնէ զիս իրեն, ու կը լուսաւորուին շատ մը մութ կէտեր: «Lorsque je m'ouvre à lui je perçois que tout est éclairé par lui. L'intuition que j'en ai est une «intuition aveuglée», car elle ne se voit pas elle-même... mais cette intuition est éclairante; je ne puis l'éclairer directement, mais, à partir d'elle, j'illumine tout le reste»²⁸: Անթխտելի է խորհուրդին ներկայութիւնը եւ Մարսել զայն կ'ընդունի. տեսանք թէ խորհուրդին առջեւ զուտ կրաւորական կամ «quiétiste» դիրք մը չի քարոզեր Մարսել. խորհուրդը մեր ներգործական միջամտութեամբ է որ պիտի բացայայտուի:

Այսպէս, Գ. Մարսել, թէեւ քիչ մը տարբերութեամբ, իր խորքին մէջ կը մօտենայ Քիրքեկարտին, բաժնուելով վերջնականապէս Մարթէն:

Մարսել Աստուծոյ գոյութիւնը կը ներկայացնէ մեզի իբրեւ խորհուրդ մը: Հարցումին՝ թէ Աստուծոյ գոյութիւնն ունի՞, Մարսել կը պատասխանէ, այո՛, ունի. սակայն ո՛չ այնպէս՝ ինչպէս առարկայ մը: Աստուծոյ գոյութիւնը մեր վերացական տրամաբանութիւններուն չ'ենթարկուիր. անոնք ճշմարիտ Աստուծոյ չեն առաջնորդեր մեզ: Որքան որ վաւերական եւ ընդունելի ըլլան այդ գոյութիւնը ապացուցանող մեր տրամաբանութիւնները, սակայն միշտ այս կամ այն մարդուն համար, այս կէտին կամ այն կէտին մէջ պակաս մը կամ ծայրայեղութիւն մը կը ներկայացնեն, ու չեն համոզեր զինքը: Roger Troisfontaines (մասնագէտը Մարսելի իմաստասիրութեան) ցոյց տուած է թէ ինչպէս «pour Marcel, les «preuves» objectives sont «valables» mais non con-

26. Charles Moeller, Littérature du XXème siècle et christianisme, vol. IV: «L'espérance en Dieu notre père», ed. Castermann 1961, pg. 211.

27. Այս կէտը պէտք է միշտ նկատի առնուի՝ երբ կ'ուսումնասիրուին Մարսելի գործերը, որպէսզի սխալ մեկնութիւններու առիթ չտրուի:

28. Charles Moeller, համ. անդ էջ 218-219:

vaincantes (c'est-à-dire au plan existentiel) »²⁹ :

Պէտք է չեղտել. համոզիչ չեն գոյութեան կարգին մէջ : Ներկայ գոյութեան կան կարգին մէջ մարդը «problématique» մըն է : Եւ չէ երկրաչափական խնդիր մը ամէն տեղ եւ ամէնուն համար նոյնն է, նոյնը չէ՝ սակայն՝ ներկայ մարդուն խնդիրը, ամէն տեղ եւ ամէն մարդու համար : Նոյնպէս Աստուծոյ գոյութեան հարցը, երկրաչափական խնդիր մը նման պէտք չէ նկատուի, որովհետեւ Աստուծոյ գոյութիւնը բոլորովին կը տարբերի երկրաչափական գոյութենէն : Այս վերջինը առարկայ մըն է, մինչ Աստուծոյ «n'existe pas comme un objet, et toute représentation objectivisante doit en être rejetée» : Հետեւաբար չենք կրնար խնդիր մը (problème – նշանակուած իմաստին համաձայն) նկատել Աստուծոյ գոյութիւնը եւ անոր լուծումը տալ թրւաքանական կամ երկրաչափական տրամաբանութիւններով, այլ «de même que l'amour commence au point où l'enquête cesse, lorsque nous faisons crédit à l'aimé malgré les déceptions, de même, pour Dieu, la connaissance authentique n'apparaît qu'au moment où l'on espère contre toute espérance, bref lorsque l'on passe du monde du «problème» à celui du «mystère»... Restaurer le sens du «mystère» est l'étape préalable à une restauration du sens du vrai Dieu»³⁰ : Ասով քիչ մը աւելի կը հասկնանք թէ ինչ կը նշանակէ խորհուրդը՝ Մարսելի համար : Աստուծոյ ինքնին խորհուրդ է, այսինքն լուսատու ներկայութիւն մը «présence éclairante» : Միջոցը՝ որով պիտի կարենանք բարձրանալ եւ մերձենալ այդ լուսատու ներկայութեան, Աստուծոյ, միայն մեզմէ դուրս չէ, այլ նաեւ մեր ներսն է : Մենք կը հանդիպինք Աստուծոյ, երբ ամփոփուելով մեր մէջ՝ կը գերազանցենք մենք մեզ : Նիցշէ, Սարթր ժխտած էին Աստուծոյ գոյութիւնը, իրենք զիրենք պարտադրելու համար : Մարսել կ'ըսէ. «Եթէ կ'ուզենք ժխտել Աստուծոյ

գոյութիւնը, պէտք ենք նախ ժխտել մենք մեզ» :

Մարսել կը մօտենայ Աստուծոյ, «խորհուրդին», հաւատով. «Եթէ մենք չհաւատանք Աստուծոյ, Աստուծոյ ոչինչ է մեզի համար. որովհետեւ մեր հաւատը կը դնէ մեզ իր ներկայութեան, եւ միաժամանակ կը հանդիպինք իսկապէս անոր՝ որ կարող է բացարձակ պատասխան մը տալ մեր գոյութեան հարցերուն» : Աստուծոյ մօտ է մեզի, միշտ կը չեղտէ Մարսել, «բայց քողարկուած ներկայութեամբ մը» : Անիկա ճշտու է, որ կը լուսաւորէ կեանքի, մահուան եւ սիրոյ ամէնէն աւելի խոր ծալքերը : Հաւատքը, կ'ըսէ հուսկ Մարսել, «seul nous ouvre à sa présence; en notre temps, cette foi rencontre vraiment un répondant absolu. Dieu est proche, mais d'une «présence voilée»³¹ :

Այսպէս, Մարսել կարծէք յոգնած՝ մէկ կողմէն դրապաշտ հոսանքէն ու ազմուկէն, միւս կողմէն դադափարապաշտ վերացումներէն, կը հանգչի վերջապէս խաղաղ ուղիղտանի մը մէջ, ուր նախապէս չատեր՝ երկար տատանումներէ ետք՝ նետուած էին, միակ եւ ճշմարիտ իրականութիւն անուանելով դայն : Մարսել մեծ կարեւորութիւն տուած է անոնց. «le témoignage des convertis, auquel Marcel a toujours accordé une importance majeure, nous introduit dans ce monde de la présence souveraine qui seul justifie la vérité du «mystère»³² :

Մարսել իր մօտ ունի Շարլ տիւ Դոսի (Charles du Bos) եւ Ֆ. Մորիաքի (F. Mauriac) դարձերու պատմութիւնը. եւ անշուշտ իր յիշողութեան մէջ թարմ պիտի ըլլան դեռ Քլո Քլաուելի (P. Claudel),

29. Roger Troisfontaines, De l'existence à l'être, la philosophie de G. Marcel, Louvain Paris 1953, II 216-222. Հմտ. նաեւ Ch. Moeller, անդ էջ 205, ծանօթ 15 :

30. Ch. Moeller, անդ, էջ 204-205 :

31. Ch. Moeller, անդ, 225 :

32. Անդ :

Ա. Գառելի (A. Carrel), Լեոն Դլոյի (Léon Bloy), Մարիթէններու (J. et R. Maritain), Է. Շթայնի (Edith Stein), եւ նոյնիսկ Հ. Հայնէի դարձին պատմութիւնը³³ : Անձեր, որոնք ամէնքը մտքի եւ հոգեկան երկար թափառումներէ ետք, հանդիպած են հուսկ իրենց կեանքի առահայտին կը վերջին դադանքին... խորհուրդին, որ կ'ամփոփէ իր մէջ իրենց փրկումը, որուն առջեւ ինկած են, արեւոյնքը աչքերնին, հաւատալով, յուսալով, սիրելով : Մեր սիրտն ու միտքը չունին արդեօք նման դադանքներ... :

Թոյլ տուէք որ Հ. Հայնէի խօսքերով վերջ դնեմ այս տողերուն, որ վերջ մը ըլլալէ աւելի՝ կարծէք նոր ապացոյց մըն է, որ կ'ուզէ շարունակել խօսիլ... : Կը ճանչնանք Հայնէի երիտասարդութիւնը. համառօտ կերպով, Հայնէ Աստուծոյ մահուան առաջին քարոզիչն էր եւ աղբիւրը Նիցշէին : Հայնէ իր անկողինէն

(անդամալոյծ) կը խօսի. «Հաւատա՛ ինձի, որովհետեւ Հ. Հայնէն է որ մահուան անկողինին մէջ, երկար ու հասուն խորհրդածութիւններէ ետք, կը յայտարարէ քեզի. յետ նկատի առնելու եւ կ'ընելու այն՝ ինչ որ զանազան ազգերը այս նիւթին շուրջ ըսած են, այս անխախտելի վստահութիւնը ունեցա՛յ՝ թէ Աստուծոյ գոյութիւն ունի, եւ կը դատէ մեր դորձերը... Եթէ այս հաւատքը չունենայի՝ այս խեղճ կեանքին վերջ մը դրած կ'ըլլայի... Իմ արարիչին հետ խաղաղութիւն հաստատեցի... այո՛, վերադարձած եմ Աստուծոյս՝ նման անառակ որդիին»³⁴ :

Ո՛րքան ճիշտ է, հետեւաբար, Ռոմանոյ Կուարտինիի այս խօսքը.

La foi est une lumière qui s'allume à une autre lumière.

Հաւատքը լոյս մըն է որ կը լուսաւորուի ուրիշ լոյսէ մը :

(Վերջ)

Հ. ՌԱՓԱՅԷԼ ԱՆՏՈՆԵԱՆ

33. Rémy Chauvin, Dieu des savants, Dieu de l'expérience. Mame, Paris 1958, pg. 200-218.

34. Georg Siegmund, անդ, էջ 345-346 :